№ 25 Փետրվարի 16 (28) 1880 Փետրվարի 16 (28) № 25

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական բարոյականութիւնը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Նամախուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Temps» լրագրի կ. Պոլսի թղթակցութիւնը։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այն դէպքը, որի մասին այս մի քանի օրերը ամբողջ Թիֆլիսը խօսում է, այսինքն Ջանջուղազեան եղբայրների յանկարծակի մնանկանալը, մի նոր երևոյթ չէ Թիֆլիսի ֆինանսական կեանքի մէջ։

Մեր Թիֆլիսեցի վաճառականը, առհասարակ, կրեդիտով առուտուր է անում, մեծ պարտքեր է անում աջ ու ձախ և երկար ժամանակ հարուստ է ձևացնում իրան։ Բայց հէնց որ նա տեսնում է թէ իր առևտրական գործերը շատ լաւ չեն գնում, կամ առհասարակ քաղաքի մէջ առուտուրը դադարած է,—նա իսկոյն իր թէ շարժական և թէ անշարժ ունեցածի մեծ մասը իր կնոջ անունով է գրել տալիս և յայտնվում է անկարող իր պարտքերը վճարելու։ Այդպիսով շատերը, որոնք գումարներ ունէին տուած իրան հարուստ ձևացնող վաճառականին, մի անգամից կորցնում են իրանց այդ գումարները, շատերն էլ կատարելապէս աղքատանում են։

Շատերը այդ տեսակ մնանկութիւններից, այո՛, փնտվում են, քանի մի օր, քանի մի շաբաթ, գուցէ մի քանի ամիս շարունակ ամբողջ քաղաքը խարդախ մնանկութեան վերաբերութեամբ իրան վրդովված է ցոյց տալիս, ամենքը սարսափում են երբ իմանում են թէ մի բուբլու վրա 20, 10, կամ 5 կոպէկ են ստանալու, կամ գուցէ ոչինչ էլ չեն ստանալու.... Բայց անցնում է մի կէս տարի, գուցէ մի տարի,—և ահա մնանկացած վաճառականը վճարել է իր պարտատէրերին տաս, գուցէ հինգ կոպէկ բուբլու վրա, ամենքը գիտեն թէ բացի սորանից խարդախ մարդը պահած ունի իր տանը շարժական կայքերով մի մեծ հարստութիւն, որ կնոջ անունով է գրված, ունի անշարժ կայքերն էլ, որոնք նոյնպէս կնոջ անունով են գրված.... Եւ ի՞նչ էք կարծում, երբ հասարակութիւնը իմանում է, թէ մնանկացողը, որ դիտմամբ էր մնանկացել, դարձեալ շատ հարստութիւններ թաղցրած ունի, կարողութեան տէր մարդ է,—այդ հասարակութիւնը արդեօք պէտք է պատժի հասարակական կարծիքի վճռով մնանկացողին, պէտք է նրան արհամարհի, թէ պէտք է մեծահոգութեամբ ների նրա անգթութիւնը.... Ուրիշ հասարակութեան մէջ այդ տեսակ խարդախ մարդուն հասարակութիւնը իր ամենախորին արհամարհանքով և զզուանքով կը պատժէր,—բայց մեզ մօտ այդպէս չէ....

Բաւական է եթէ դուք հարուստ էք, բայց ի՞նչ միջոցներով էք ձեռք բերել ձեր հարստութիւնը,—այդ ոչ օրին փոյթ չէ։

Ուրիշ երկրում հասարակութիւնը կը դրոշմէր ամօթի և անարգանքի դրոշմ խարդախ, խաբերայ մնանկացողի ճակատին, իսկ մեզ մօտ, հէնց որ իմանում են որ մնանկացողը պահած ունի դրամական միջոցներ, թաղցրած ունի կայքեր,—նրա հետ հաշտվում են, նրան կրկին ձեռք են մեկնում, նրան յարգում են, իսկ գուցէ, մինչև անգամ շատերը գովում են նրա ճարպիկութիւնը։

Սուտ մնանկանալը երբ մեծ կրեդիտ ունես, երբ ամենքին պարտ ես,—նոյն բան է որ կրակ տաս քո ապրանքին նրան ապահովացնելուց յետոյ։

Բայց այդ բոլորը մեր հասարակութիւնը շատ շուտ է մոռանում և ներում է։ Այդ բաւական չէ, հէնց որ մեր Թիֆլիսեցին իմանում է որ խաբերայ մնանկացողը իսկապէս ունևոր մարդ է,—նա իսկոյն աշխատում է կրկին մօտենալ այդ խարդախ մարդուն, ձեռք է մեկնում նրան, շողոքորթում է նրան, ամեն տեսակ պատիւներ և յարգանքներ է ցոյց տալիս նրան։ Դու փող ունես,—այդ բաւական է որ յարգված և պատուած լինես ամբողջ քաղաքից... Բայց ինչ տեսակ միջոցներով ձեռք բերեցիր դու քո հարստութիւնը,—այդ մի և նոյն է։

Ամեն Թիֆլիսեցի ծնողները պատիւ կը համարեն ամուսնացնել իրանց աղջիկը խարդախ և խայտառակ կերպով մնանկացած վաճառականի որդու կամ եղբօր հետ...

Նկատված է որ երբ որ մի վաճառական Թիֆլիսում մնանկանում է, մի քանի ժամանակից յետոյ նրա կրեդիտը միշտ բարձրանում է մեր հասարակութեան մէջ...

Ուրիշ երկիրներում ասում են՝ «այդ մարդը մնանկացել է, ուրեմն նրան հաւատ ընծայել չի լինի...»

Իսկ Թիֆլիսում ասում են «այդ մարդը մնանկացել է, նշանակում է նա փողեր ունի, ուրեմն նրան հաւատալ կարելի է, որովհետև նա միայն սուտ կերպով է մնանկացել, իսկ փողեր ունի, հարստութիւն ունի...ուրեմն եթէ նա ունևոր է, նրան կարելի է հաւատալ...»

Եւ ճշմարիտ, մեզ մօտ մնանկացած մարդիկների կրեդիտը մնանկանալուց մի քանի ժամանակից յետոյ, միշտ աւելանում է....

Ահա մեր հասարակական բարոյականութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Փետրվարի 3-ին

Դեկտեմբերի սկզբներից մինչև յունվարի վերջերը սաստիկ ցրտեր էին լինում. Ր. ջերմաչափով ցուրտը հասա. մինչև 20—25 աստիճանին և այն ևս գրէթէ շարունակ երկու ամիս։ Վառելափայտի սաժենը 75—80 ռուբլի բարձրացաւ։ Դուրսը չինելու գործերը դադարեցան. մշակ դասակարգի օրական վարձերը կտրվեցան և հարիւրաւոր անձեր մնացին օրական հացի կարօտ։

Այժմ ձիւնը սկսել է հալվել. կարելի է շուտով կը բացվեն դուրսը չինվող գործերը, բայց սիրտ պիտի անեն արդեօք գործատէրերը սկսել իրանց գործը և սորանով մշակին տալ միջոց առօրեայ հացի գինը վաստակելու. այդ չը գիտեմ։ Երբ որ ձուի մէկը 6—9 կոպէկ արժէ, մսի ֆունտը՝ 10—15 կ., հացինը՝ 6—8 կ., իւղինը՝ 35—40 կ., պանրինը՝ 20—25 կ., նաւթինը՝ 13—15 կ., ցորենի խալվարը 90—100—120 բուբլ, գարու խալվարը 70—80 բուբլ, չաքարի պուդը՝ 9—10 բ., և այլն, չը գիտեմ, էլ ով սիրտ կանի այս չը լսված ու չը տեսնված թանգութեան միջոցին մի նշանաւոր գործ սկսել։—Հարիւրաւոր մարդիկ կան, որոց քաղցը էր իրանց ճակատի քրտինքով վաստակել առօրեայ հացադինը՝ բայց գործ չը գտնելով, ըսթրպված են մուրալ։ Այս այսպէս լինելով, հասկանալի է որ քաղաքիս աղքատների թիւը՝ սովորականից եռապատիկ ու քառապատիկ աւելցած է։—Երևանը 3000 տանից փոքր ինչ աւելի է. այդ թվից մի հազարը կարելի է ապրուստից բոլորովին զուրկ համարել. այո, համարձակ կարելի էր ասել, որ այսօր 5—6 և մինչև 7000 հոգի անհաց, անփող և անգործ է մնացած։

Աւելացրու սորա վրա և ցրտից առաջ եկած զանազան հիւանդութիւնները, այն ժամանակ հասկանալի կը լինի աղքատ դասակարգի խղճալի դրութիւնը։

Հարուստ և միջին դասակարգը բոլորայապէս պարտաւոր է այսօր պահպանելու իր աղքատ դասին, եթէ ոչ ցրտից գոնէ հացի պակասութիւնից. և դորա համար՝ մեր կարծիքով, հարկաւոր է մինչև նոր հունձը, կամ մինչև մայիսի կէսը, 120 խալվար հաց (ալիւր)։ Այդքան ցորենի ալիւրը կարժէ մօտ տասներկու հազար կամ տասերեք հազար բուբլի։ Այժմ խնդիրը սորանում է թէ այդ 12—13000 բուբլին որ տեղից պէտք է ճարվի։ Քաղաքային խորհուրդը (Դումա) այս խնդրի մասին ամսոյս ընթացքում քանի մի նիստ է ունեցել, զանազան առաջարկութիւններ են եղել, զանազան վճիռներ են կայացել, բայց մինչև այսօր կատարեալ նիւթական ապահովութիւն չէ հասել խեղճ աղքատներին։—Հարուստ քաղաքացիները փոխարինաբար հաւաքել են իրանց մէջ մօտ 17 հազար բուբլի և քաղաքային խորհրդից ընտրած յանձնաժողովին յանձնել, որ Օդէսայից կամ Թիֆլիսից ալիւր բերէ և բաժանէ էժան գնով հացագործներին, որպէս զի սոքա ամբողջ քաղաքին հարկաւոր եղած օրական հացը տան անպակաս։ Բանից երևեցաւ, որ ոչ հացագործներ և ոչ էլ յանձնաժողովը վարվեցին քաղաքային խորհրդի վճռին համաձայն, թէ նոքա և թէ յանձնաժողովի անդամներից ոմանք վարչութեան կարգադրութեանց հակառակը գործեցին։

Նոր ժողովներ եղան, նորանոր վճիռներ կայացան, յանձնաժողովի գործերը քննիչ ժողովի յանձնվեցան, հացարանները վերահսկողներ նշանակվեցան իրաւասուներից, որպէս զի ալիւրի մէջ հող ու բրնձի թեփ չը խառնեն և հում չը թխեն հացը ու հացթուխները չը զրկեն, նշանակած գնից աւելի գնով չը վաճառեն ծածուկ և գիւղացիներից իւրաքանչիւրին օրական կէս լիտրից աւելի հաց չը ծախեն, որպէս զի քաղաքն չընկնի մեծ պարտքի տակ և քաղաքացիների օրական հացաբաժինը չը պակսի և այլն և այլն։ Բայց այս բոլորը չը կարողացան ոչ մի չնչաչափի օգուտ բերել աղքատին։ Այժմ քաղաքագլուխը մի կողմից, ոստիկանապետը միւս կողմից, և մանաւոր անձերն էլ մի երրորդ կողմից բացել են ստորագրութիւն աղքատների օգտին, բայց դորանով էլ աւելի բան չի գլուխ գալու, որովհետև՝ ումից հազար էր սպասվում, տալիս է տասը, ումից տասը—տալիս է մէկ։ Չէ կարելի ասել որ քաղաքային վարչութիւնն ու խորհուրդը բոլորովին անհոգ են դէպի աղքատ դասակարգի վիճակը. տեսնում ես ամենայն շաբաթ մի, կամ երկու ժողով է լինում. խօսում են, խորհում են, վիճում են, վճռում են. բայց և այնպէս՝ աղքատների փորը քաղցից վեց-վեց է ոռնում, հացթուխներն իրանց չարագործութիւնները շարունակում են և կայացած վճիռներն էլ քնում են թղթերի ծալերում։ Ո՞վ է մեղաւորն արդեօք. քաղաքային խորհուրդը. վարչութիւնը, թէ քաղաքացիք. դժուարանում եմ որոշակի պատասխանել այդ հարցին. ես միայն գիտեմ, որ մենք շատ խօսողներ ունենք, բայց շատ սակաւ գործողներ։—Հացթուխների պարտազանցութիւնը, օրինազանցութիւնը և կամայականութիւնը ծածկվում

է ազատ վաճառականութեան պատրուակով։ Ամբարատէրերի անգթութիւնն ու ագահութիւնը ծածկվում է նոյնպէս վաճառականութեան ազատութեան դիմակով։

Այսպիսի դիմակներով արդարանում են այն մարդիկ, որոց պարտաւորութիւնն էր ամառվանից հոգալ և ապահովել թէ քաղաքիս և թէ նահանգիս աղքատների վիճակը։ Թողնենք նահանգի աղքատների վիճակը, գոնէ քաղաքիս աղքատների համար կարելի էր 2—3 ամսուայ ընթացքում բաւարարիչ քանակութիւնով հաց պատրաստել մինչև նոր հունձը, եթէ միայն գործունեայ մարդիկ լինէին մեր քաղաքային վարչութեան գործին մասնակցողները։ Արդարութիւնը պահանջում է ասել, որ քաղաքագլուխը իր վարչական անդամոց (ուպրավայի) հետ միայն չէր կարող վերահաս լինել, միջոցը գտնել և գործ դնել. դորան պէտք է օգնէին իրաւասունների ժողովը, քաղաքային խորհուրդը և մանաւանդ մեր հարուստները։

Ես չեմ մեղադրում ոչքի. որ իրաւասունների մէջ օրէնք խմացող և օրինաւոր խօսող երեք կամ չորս անձինք միայն կան, դա հանգամանքի բերումունք է, բայց ես զարմանում եմ որ իրաւասունների բազմութիւնը բաղկացած լինելով վաճառական անձերից, որոնց լաւ յայտնի պէտք է լինէին գոնէ դրամական գործողութիւնները, սակայն այդ իսկ նկատմամբ էլ մեր վաճառական իրաւասունները ցոյց տուին իրանց չը հասկացողութիւնը և, կամ լաւ է ասել, իրանց անտարբերութիւնը թէ այդ գործողութեանց մասին վիճելիս և թէ կայացած վճռի գործադրութեան պարտաւորութիւնը կատարելիս։ Դոցա շատ լաւ ծանօթ էր մի կողմից այս տարուայ բերքի սակաւութիւնը նահանգիս մէջ, միւս կողմից արքունի կապալառուի ահագին քանակութիւնով ցորեն հաւաքելը և երրորդ կողմից՝ մասնաւոր մարդկանց ձգտումները։ Ժողովելու իրանց ձեռքի մէջ մնացած ցորենի քանակութիւնը՝ որպէս զի յետոյ ահագին գներով ծախեն։ Ցեմնելով և հասկանալով այս բոլորը, ոչոք նոցանից իրաւասունների ժողովում վճռաբար չասեց թէ այդ բոլոր հանգամանքներից հացի պակասութիւն է սպասում մեր քաղաքին և նահանգին. ոչոք վճռաբար չը պահանջեց որ գոնէ ժամանակին դրսից բերել տրվի ցորենի կարևոր քանակութիւնը։

Շարունակ երկու և կէս ամիս քաղաքային արկղի մէջ 30—35 հազար բուբլի փող կար, ասում են, որ գոյացել էր մասամբ կամաւոր ստորագրութիւնից, մասամբ ուրիշ աղբիւրներից. այդ դումարը կարելի էր մի քանի անգամ դարձնել, մի քանի անգամ բերել տալ 15—16 հազար պուդ ցորեն և չը թոյլ տալ որ հացթուխները գործեն իրանց չարագործութիւնները, ուտացնելով մեզ հացի փոխարէն՝ բրնձի թեփ, հող և խմոր, բայց ոչինչ չարին մեր վաճառագէտ իրաւասունները, իրանց անտարբերութեան շնորհիւ, թողնելով որ ամեն բան քաղաքագլուխն անէ։

Մեր վաճառական թուրք ու հայ իրաւասունների անտարբերութիւնից է դարձեալ որ իրանց միջից ընտրված մասնաժողովները ճշդութիւնով չեն կատարում իրանց վրա դրած պարտաւորութիւնը, որովհետև գործին յարմար չէ լինում այս կամ այն ընտրութիւնը, անտարբերութեան պատճառով։

Երևանցին դեռ ևս չէ հասկանում, որ մասնաւորի շահը կապված է ընդհանուրի բարօրութեան հետ. այդ պատճառով էլ, երբ երևանցի անհատը ներկայ է լինում ընդհանուրի գործին, փոխանակ խորհելու, խօսելու և գործելու, յօրանջում է, ընդհանրական ժողովի մէջ զբաղվում է իր մասնաւոր, առանձին շահերի վրա մտածելով, և կամ թէ մեղադրում ու զրպարտում է սորան և նորան, որ այս ինչ բանն այսպէս է գործել և ոչ թէ այնպէս։—Անտարբերութիւն, հեռուից ուրիշի արածի վրա տրտնջալ ու վատաբանել՝ «ես որ լինէի, այսպէս կանէի, այնպէս կանէի, թող ինձ իրաւունք տան, ես այսպէս կանեմ. կաց, ես այս ինչ բանը պէտք է այսպէս անեմ և այն և այն», ահա այդ է երևանցու բնաւորութեան նկարագիրը։

Եթէ որ մենք համեմատելու լինենք Ալէքսանդրապոլի ժողովուրդը Երևանի ժողովրդի հետ, կը տեսնենք որ վերջինս առաջինից խելքի ու զարգացման կողմից գերադաս է, բայց չունի առաջինի ոչ եռանդը, ոչ տոկունութիւնը, ոչ հանրական գործերին մասնակցելու պատրաստականութիւնը, ոչ նորա առատաձեռնութիւնը և ոչ էլ նորա ազգայնական ձգտումները։

Հեռու չը գնանք. 15—17 տարվայ ընթացքում, Ալէքսանդրապոլը ծախսել է իր եկեղեցիների շինութեան, ուսումնարանների բարեկարգութեան և աղքատանոցի պահպանութեան վրա 170—190 հազար բուբլի, իսկ Երևանը՝ դորա մի քառորդը հազիւ թէ ծախսած լինի, չը նայելով որ Երևանի ժողովուրդը նիւթապէս աւելի ապահով է, աւելի հարուստ է, քան թէ Ալէքսանդրապոլինը։ Տասն և հինգ տարվայ ընթացքում Ալէքսանդրապոլը շինել է երկու հոյակապ եկեղեցի 130—140 հազար բուբլու արժողութեամբ, առանց դրսից օգնութիւն ստանալու, իսկ Երևանը՝ մի՞ն նոյն ժամանակամիջոցում, մի եկեղեցի է հիմնել և հազիւ թէ գետնից երեք արշին բարձրացրել։ Ու թողել է, և ո՞ւ գիտէ, երբ և իցէ գլուխ կը բերէ իր ձեռնարկած բարեպաշտական գործը, թէ կը թողնէ աւերակ դառնալու։ Երեք տարի է, որ երևանցիք մտածում են շինել աղքատանոց, հիւանդանոց, փոխադարձ վարկի գանձարան (բանկ), խնայողութեան և սպառող—ընկերութիւն, մտածում են օրինաւոր հոգաբարձուներ կարգել եկեղեցիների արդիւնքները ճիշդ պահելու և չահացնելու համար. մտածում են գանձանակի սովորութիւնը վերջացնել, հոգևորականներին այլ կերպով վարձատրել, հոգևոր դպրանոցը բերել քաղաքի կենտրոնը՝ որպէս զի բոլոր թաղերի երեխաներին դիւրին լինի երթևեկութիւնը. մտածում են քաղաքային թատրոն շինել և այլն և այլն. բայց այդ բոլոր մտածմունքներից ոչ մինը գլուխ չեն բերել մինչև հիմայ և դեռ ևս շատ ու շատ տարիներ էլ գլուխ չեն բերելու։—Եթէ մի յառաջադիմութիւն անող հասարակային հիմնարկութիւն կայ՝ դա է կլուբը։ Սորա տարեկան արդիւնքը հասնում է 9000 բուբլու, որի 6000-իցն աւելին թղթախաղիցն է գոյանում։ Կլուբի անդամների թիւը հասնում է այժմ 200-ի, որից 50—60 միայն օտարական աստիճանաւորներ են, մնացածը տեղացի հայերն ու թուրքերը։ Թուրքերիցն էլ շատ քչերն են մասնակցում, այնպէս որ կլուբի պահպանողները հայերն են իսկապէս։ Ամենայն կիրակի լինում է տեղային և եւրոպական նուագածութիւն ու պար։ Տեղային նուագածութիւնը ծակում է օտարականներից շատերի ականջը, նոքա աշխատում են հանել կլուբից այդ միակ տեղային երևոյթն էլ, որպէս զի ոտով ու գլխով եւրոպացի չինեն մեզ։

Այս հանգամանքից չէ կարելի եզրակացնել թէ տեղացիք տեղային սովորութիւնների պահպանութեան նախանձախնդիր են։ Ուր էր եթէ այդ զգացումը լինէր մերայնոց մէջ. այդ մասին էլ պէտք է շնորհակալ լինել մի քանի անհատներին, որք հասկանալով տեղային սովորութիւնների նշանակութիւնը, չեն ուզում օտարի քմացը զոհել, նրանց հաճոյանալու համար։ Ափսոս միայն որ կլուբի մէջ բացի թղթախաղից ու քեֆից ուրիշ բան չը կայ։ Այնտեղ պէտք է լինէին երբեմնապէս հասարակաց դասախօսութիւններ, քաղաքի բարեկարգութեան վերաբերեալ հանրական զրոյցաբանութիւններ, գրականական երեկոներ, և այլն։ Միշտ թուղթ խաղալ մինչև կէս գիշերը և հաց ուտել ու գնալ քնելու, դորանում մենք ոչ մի կրթողական բան չենք նշմարում. դուք գիտէք։ Աղքատների վրա էլ մտածեցէք պարոններ. նոքա կորչում են. առ այժմ գոնէ հաց տուէք, մինչև որ ժամանակ գտնէք նոցա մտքի և մարմնի առողջութեան մասին ևս հոգալու։

Սկունի

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

6 փետրվարի

Երբ «Մշակի» Երևանի թղթակիցը սրանից մի քանի ամիս առաջ գրում էր, որ Երևանում հացի մեծ պակասութիւն է տիրում, գանվեցան սկեպտիկներ, որոնք հերքել ուզեցին այդ լուրը, բայց պ. թղթակիցը թւանշաններով հաստատեց իր ասածը։

Ներքև պատմածս ևս հաստատում է այս։

Մի քանի պարոններ պատահմամբ մտնում են մի խեղճ գերդաստան։ Այդ պարոնների ասածների ճշմարտութեան մասին բոլորովին կասկած չունենալով, ես շարունակում եմ խօսքս նոյն իսկ նոցա պատմածից։ Ներս մտնելիս ձեր առաջ ներկայանում է մի խոնաւ գուբ, բաղկացած միայն մի բաժանմունքից, որի մի անկիւնում մի քանի տախտակների վրա դրած է քուրսին, որտեղ է և գերդաստանի սաքուն կամ սենեակը (հաչեցէք ինչ կամենաք)։ Ո՛չ վառարան, ո՛չ վառելիք և ո՛չ ալիւր. ահա այդպիսի սարսափելի վիճակի մէջ է այդ գերդաստանը։ Ընտանիքի մօրը չրջապատել էին 3—4 կիսամերկ մանուկներ, որոնք ցրտից դողում էին, նոյնպէս և ծծկեր երեխան, որին մայրը մի կեղտոտ փալասով փաթաթել էր։ Գերդաստանի հայրը մի արհեստաւոր է, որ գործիքներ չունենալու պատճառով այլոց մօտ ծառայում է ամսական 5 բուբլով։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ հինգ բուբլի միայն ալիւրի չէ բաւական։

Եւ այդ բոլորը այդ գերդաստանը տանում է ելել, առանց մինից ողորմութիւն խնդրելու, առանց մինին յայտնելու իր սարսափելի դրութիւնը։

Այդպիսի գերդաստանի անդամները պատկանում են այն մարդկանց թւին, որոնք գործել կարող չեն, իսկ մուրալ ամաչում են և այդպիսիները իսկապէս աւելի արժանի են ամենայն օգնութեան և համակրութեան, քան թէ այն թշուառ արարածները, որոնք մուրացկանութիւնը իրանց համար արհեստ են շինել և բոլոր գաւառի գիւղերը մշտապէս ոտքի տակ են տալիս և աղքատաց գանձանակից էլ օգնութիւն են ստանում։ Մենք ասել ենք մի անգամ և էլի կասենք, որ շատ կարծեցեալ աղքատներ, գանձանակից օգնութիւն ստանալով, միայն գողանում են իսկապէս կարօտեալների բաժինը։

Առհասարակ մեզանում շատ են սնփող հացի, անաչխատ կեանքի ցանկացողները։ Օրինակ, կայ մի հոգևորական որի, երկու հասակաւոր որդիքը զարդարված ու զուրված ամբողջ օրը քաղաքիս փողոցներն են չափչփում, իսկ ինքը գիւղերում մուրացկանութիւն է անում։ Մի այլ մարդ (աշխարհական) ունի երեք հասակաւոր որդիք, բայց ինքն նոյնպէս գիւղերում մուրացկանութիւն է անում։ Մի յիմար խօսք տիրում է ժողովրդի մէջ։ «տուր ոսկի գօտեորին, մի քնիր» և ահա այդ խօսքին հետևելով մենք քաջալերում ենք ծուլութիւնը, արբեցողութիւնը և այլն։ Այո, դժուար հանգամանքների, վատ ժամանակների մէջ ենք ապրում. մի կողմից տաճկահպատակ հայը սոված կարկառում է իր բազուկները դէպի իր ռուսաբնակ եղբայրը և նրանից հաց է խնդրում, միւս կողմից մեր հարևանները ևս քաղցածութիւնից տանջվում են և մեր քաղաքացին հացի խնդրով է զբաղված։

Անցեալ 1879 թիւը հունձքի կողմից պտղաբեր չէր ամեն տեղ, նոյնպէս պտղաբեր չէին մեր գաւառի դաշտային գիւղերի ցանքերը, բայց լեռնային գիւղերի արտերը կարելի է ասել որ առատութեամբ հունձք տուին։

Եթէ որ մեր գաւառի հացերը ուրիշ գաւառներ չը տանէին (ինչպէս Ալէքսանդրապոլ, Կարս) կամ մեր գիւղերի կալուածատէրերը հարիւրաւոր սամարներով պահած չը լինէին, այս դրութեանը չէր հանի մեր գաւառը։ Կալուածատէրերից մինը անցեալ օր մի քանի ջուալ ալիւր էր ուարկել մէյդանը և պուդը երեք բուբլով ծախում էր, բայց մեր քաղաքացիներից մինը պ. Վ. խղճալով չքաւորների վրա, սկսեց 2 բուբլով ալիւր ծախել, այնպէս որ մեր պ. կալուածատէրը հարկադրվեցաւ վերցնել ու տանել իր ալիւրները։ «Գայլը ամպոտ օրն է սիրում» ասում է մեր ժողովրդական առածը. կեղեքեցէք պարոններ, քանի ժամանակը ձեռքերիդ է, էլ ինչ հարկաւոր է մտածել չքաւորների վրա, էլ ինչ հարկաւոր է ունենալ կարեկցութիւն. ահա այդպիսի անկարեկից անձանց համար կարելի է ասել այն առածը թէ՝ «աչխարհը վառվի, նրանց մի խուրձ խոտը չի այրվի։»

Մեր քաղաքացիք—թէև ուշ—հաւաքեցին իրանց մէջից մօտ 5000 բուբլի փող և արդէն ձեռնարկել են ցորեն գնելու և առժամանակ բաւականանալու, մինչ թոյլատրվի քաղաքային արկղից 6000 բուբլի ծախսելը, որ Ռուսաստանից ալիւր բերել տան։

Փող վճարող այդ պարոնները, եթէ հանգամանքները այնպէս լինեն որ կամ հացը էժանանայ, կամ ստիպված լինեն էժան ծախելու չքաւորներին և դրանից չը գոյանայ իրանց վճարած դումարը, պակասով էլ պէտք է ստանան իրանց փողերը։ Այդ օգտաւէտ ձեռնարկութեանը իւրաքանչիւրը իր կարողութեան համեմատ նպաստեց. ոմանք փող տուին փոխառաբար, ոմանք իրանց ձրի աշխատութիւնը առաջարկեցին ցորեան աղալ տալու համար և այլն. մի պարոն նուիրեց 2 մէշօք ալիւր և այլն։ Ցիշեալ փողով պատրաստված ալիւրի պուդը ծախվում է, նայելով գնողների կարողութեանը, 2 ր. 20 կ.-ից մինչ 2 ր. 60 կ., փոխանակ 3 բուբլու։

***

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

8 փետրվարի

Կարդալով «Մշակի» № 13-ի մէջ շամախեցի պ. Գ. Լ.-ից իր համաքաղաքացիներին նուիրած ալիւրի բաժանման առիթով ձեր յայտնած զարմանքը, թէ լիբերական հայերին ինչի են ջոկում միմեանցից, հարկաւոր եմ համարում հետևեալ մի քանի նկատողութիւնները անել։

Մենք լուսաւորչական հայերս երբէք մեզանից չենք բաժանում լիբերական մեր հայ եղբայրներին, այլ իրանք լիբերական հայերը փախչում են մեզանից և իրանց բաժանված են համարում։ Լիբերականների առաջնորդ Ս. Հ. անդադար յորդորում է իրաններին հեռու կենալ լուսաւորչականներից, չունենալ նրանց հետ ոչինչ յարաբերութիւն, չը գնալ լուսաւորչականների հարսանիքները, սեղանակից չը լինել նրանց խնջոյքներին։ Երիտասարդներին և օրիորդներին պատուիրած է չը մտնել և ընկերութիւն չանել լուսաւորչականների հետ։ Պ. Ս. Հ. ձգտում է երկսեռների հագուստին անգամ այնպիսի ձև տալ, որ նոքա զանազանվեն լուսաւորչականներից։

Հետևալ եղելութիւնները կուզենայի պատմել։

Մի լուսաւորչական հայ պակվելով, հարսանիքի է հրաւիրում իր երկու բարեկամ հայ լիբերականներին և իր ազգական հայ լուսաւորչական օրիորդի, որ նշանված էր լիբերական երիտասարդի հետ։ Երիտասարդները գալիս են հարսանիքի տան փողոցը և կանչելով փեսային, յայտնում են նրան իրանց շնորհակալութիւնը և ասում են, որ նոքա օտարների խնջոյքին չեն կարող սեղանակից լինել, իսկ օրիորդը թոյլտուութիւն խնդրելով իր փեսացուի ազգականներից հարսանիք գնալու համար, պատասխան է ստանում, որ Աստուծոյ եկեղեցու զաւակի հարսնացուն չէ կարող օտարների հարսանիքին ներկայ գտնվել։

Մի լուսաւորչական հրաւիրում է լուսաւորչականների առաջնորդ եպիսկոպոսին ճաշի։ Հիւրերի թւում լինում է և մի լիբերական հայ։ Միւս օրը բոլոր լիբերականները նախատում էին նրան լուսաւորչական եպիսկոպոսի հետ ճաշ ուտելու համար։

Անցեալ 1879 թւին լուսաւորչականների առաջնորդը խնդրել էր տեղական վարչութիւնից օրիորդաց ուսումնարանի կառուցման համար լիբերականների դպրոցին կից գտնված դատարկ հողը։ Լիբերականները իսկոյն բողոքեցին և արգելք եղան առաջնորդի խնդրանքի իրագործվելուն։

Երբ Շամախում մի հարկ, կամ տուրք է հաւաքվում, լիբերականները խնդրում են, որ իրանց վճարելի բաժինը որոշեն և երբ գումարը որոշվում է, հաւաքում են իրանց մէջ և ներկայացնում են ուր հարկն է։

Գործերի այս ցաւալի դրութիւնը ապիթ է տուել պ. Գ. Լ.-ին լիբերականներին բաժանել լուսաւորչականներից։

Պէտք է խոստովանել, որ լուսաւորչական հայերն էլ շատ լաւ չեն վարվում իրանց լիբերական եղբայրների հետ, նոքա էլ նոյնչափ խստութեամբ են վերաբերվում դէպի լիբերականները։

Այս իրողութիւնը շատ ցաւալի է և ցանկալի կը լինէր, որ երկու դաւանութիւններին պատկանող հայերը շարունակէին հետևել իրանց կրօնին, առանց միմեանց խիղճը բռնաբարելու, բայց մի և նոյն ժամանակ բարեկամ լինէին, բարելաւացնէին իրանց փոխադարձ յարաբերութիւնները և որ գլխաւորն է, չը մոռանային թէ կրօնը ազգութեան հետ յարաբերութիւն չունի և որ չը նայելով կրօնի զանազանութեանը թէ լիբերականները և թէ լուսաւորչականները շարունակում են հայ մնալ։

Շամախեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի օրը «Մշակի» համարը կը հրատարակվի, բայց նոյն իսկ երեքշաբթի օրը, փետրվարի 19-ին, Թագաւոր Կայսրի գահակալութեան 25 ամեայ տարեդարձի օրը լինելով, տպարանում չեն բանի, ուստի չորեքշաբթվայ, փետրվարի 20-ի համարը չի հրատարակվի, այլ «Մշակի» հետևեալ համարը կը հրատարակվի 21-ին, հինգշաբթի օրը։

—

Հետևեալ շաբաթվանից «Մշակի» մէջ կը սկը սենք տպագրել մեր աշխատակից պ. Բաֆֆիի նոր վէպը «Խենթ» վերնագրով։ Վէպի բովանդակութիւնը ներկայացնում է զանազան նշանաւոր արկածներ վերջին ռուս-թիւրքաց պատերազմից։

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են։ «Թէև այստեղ ամառ ժամանակ տենդը մի սովորական ցաւ է համարվում, բայց սկսված անցեալ 79 թւի մարտ ամսից մինչև այսօր այդ ցաւը մի այնպիսի զարհուրելի կերպով է յայտնվում քաղաքում, որ աւելի քան 800 հոգի այդ ժամանակամիջոցում զոհ գնացին այդ ցաւին, այնպէս որ ոչ ոք այստեղի բնակիչներից չէր զարմանում, երբ լսում էր մի ընկերոջ կամ ազգականի մահը, որի հետ նախընթաց օրը փողոցում տեսնվել է։»

—

Մեզ գրում են ՂԶԼԱՐԻՑ որ այդ քաղաքում կազմվել է անցեալ տարվայ դեկտեմբեր ամսին հայ և ռուս թատրոնասէրների խումբը։ Ներկայ թվի յունվարի 24-ին եղաւ երկրորդ հայ ներկայացումը։ խաղացին «Մարիէտտա» և «Նինոյի նշխարը» պիեսները։ Թղթակիցը պատմում է որ դեկորացիան շատ չքեղ էր, և դահլիճը լի էր թէ հայ և թէ մասամբ ռուս հասարակութեամբ։ Ներկայացմանը մասնակցեցին՝ տիկին Թամար Կաճկաճեան, օրիորդներ Շերմազանեանց և Արիչեանց։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Այս տարի աւելի անաջողութեան մէջ է Բագուի առուտուրը քան թէ անցեալ տարին։ Նաւթը, որ մեր գլխաւոր արդիւնաբերութիւնն է, նրա առուտուրն էլ ընկած է. նրա վրա աշխատող հազարաւոր մշակներ ձեռները ծոցներում դրած, սպասում են այդ մթերքի առուտուրի վերականգնելուն, բայց շատ յոյս չը կայ։ Իսկ թանգութիւնը թէ հացի, թէ մսի, թէ ամենայն տեսակ ուտելեղէնների, թէ վերջապէսխանութների և ընակարանների թանգութիւնը խիստ ճնշում է ոչ միայն ազքատներին, այլ և միջակ ապրողներին։»

—

Մեզ հաղորդում են ԲԱԳՈՒԻՑ որ այդ քաղաքում գողութիւնները և աւազակութիւնները այժմ հետզհետէ սաստկանում են։

—

«Այս վերջին ժամանակներս, գրում են մեզ ԲԱԳՈՒԻՑ, ոմանք սովորութիւն են արել քաղաքիս փոստատանից գողանալ «Մշակի» և այլ լրագիրների համարները և դորանով նեղութիւն պատճառել լրագիրների իսկական բաժանորդներին։»

—

ՍՈՒԽՈՒՄԱԼՈՒԻ գաւառից մեզ գրում են, որ այնտեղ ցորենի խայվարը (30 պուդ) ծախվում է այժմ 100 բուբլ, ալիւրը 120 բուբլ, գարին 80 բուբլ, կորեկը հասաւ 60-ի։ Սրանց համեմատութեամբ միւս ամենայն ուտելիքները նոյնպէս թանգացան։

—

Մեզ գրում են ԻԳԴԻՐԻՑ։ «Հարիւր տարեկան ծերունիները վկայում են, որ այս տարվայ պէս թանգութիւն և խիստ ձմեռ չը տեսնված և չը լսված բաներ են մեր կողմերում։ Թանգութեան սաստկութիւնը և չունեորների վերջին ծայր խեղճութիւնը ու շատերի քաղցածութիւնը մարդուս մտածել է տալիս՝ թէ մինչև գարունը արդեօք ինչ կը լինի ողորմելիների դրութիւնը։»

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են և հետևեալը։ «Մօտ օրերս մի քանի հարիւր ուղտի բեռ ալիւր հասաւ տեղս աղքատներին բաժանելու համար։ Իսկ ընդհակառակն ունեորները, իբրև չունեորներ գնում են, կանգնում, երեսը պնդացնում են, որպէս զի իրանց տան իսկական աղքատների համար բերված ալիւրի պաշարը։

—

Փետրվարի 13-ին եղաւ Արծրունու թատրոնում պ. Սլավեանսկու վերջին հրաժարական կոնցերտը։ Թատրոնը կատարելապէս լի էր և հասարակութիւնը կոնցերտի աւարտվելուց յետոյ ոգևորութեամբ մի քանի անգամ կանչեց պ. Սլավեանսկուն։

—

Ռուս «Голосъ» և «Русскій Курьеръ» լրագիրները հաղորդում են որ մայրաքաղաքների հասարակութեան մէջ սկսեցին հաւաքել նուիրատուութիւններ յոգուտ այն սոլդատների, որոնք վնասվեցան Զմերային պալատի մէջ փետրվարի 5-ին պատահած ճայթիւնի ժամանակ։

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ փետրվարի 6-ից հետևեալը. «Անցեալ օրը մի փոքրիկ հրդեհ պատահեցաւ մի դարբին արհեստաւորի խանութում։ Արհեստաւորը երկիւղ կրելով, որ մի գուցէ ամբոխը հաւաքվելով քանդէ մօտակայ չինութիւնները, որոնց մէջ էր և իր տունը, ոչոքի իմաց չէր տուել և միայն իր հարևանների օգնութեամբ հանգցրել էր հրդեհը։ Բացի դարբնի հարևաններից հրդեհի մասին ոչ ոք չէր իմացել։ Այստեղ մտադրութիւն կայ դարբիններին քաղաքի առանձին թաղում, Ղըռխ-Բուլաղ գետի ափին բնակեցնել։ Երևի ներկայ տարվայ մէջ կը գործադրվի այդ միտքը, բայց դա չարիքի առաջն առնելու համար արմատական միջոց չէ կարող համարվել, այլ հարկաւոր է, որ մեր քաղաքացիք օր առաջ հրդեհաշէջ մեքենաներ բերել տան, եթէ ոչ ջրից հեռու, մեքենաներից զուրկ մի քաղաք, մի գիշերվայ մէջ հեշտութեամբ կը փոխարկվի փայտակների մի կիտուածի։ Դրանից յետոյ քաղաքացիներին կը մնայ մուրացկանութիւն միայն անել։ Ցոյս ունենք, որ այս ամենաանհրաժեշտ կէտի վրա հարկաւոր ուշադրութիւն կը դարձնվի։»

—

Հինդշաբթի, փետրվարի 14-ին հայ դերասանական մշտական խումբը Թիֆլիսի Ամարային թատրոնում ներկայացրեց «Մի կնոջ տանջանքը» դրաման և «Երկու տոմսակներ»։ Այդ պիեսները պ. Ա. Յովհաննիսեանի թարգմանութիւններն են։

—

Այսօր, փետրվարի 16-ին լինելու է Թիֆլիսի դումայի նիստը։ Միւս հարցերի թւում քննվելու է մանուածողովի զեկուցումը թագաւոր Կայսրի 25-ամեայ յոբելեանի տօնելու մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«TEMPS» ԼՐԱԳՐԻ Կ. ՊՕԼՍԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

«Շատ հետաքրքրելի է ներկայ հանգամանքներում ուշադրութեամբ աչքէ անցնել հայ լրագիրները, որպէս զի կարող լինենք հասկանալ հայ ազգի կարծիքը Անգլիայի պօլիտիկայի վրա փոքր-ասիական բէֆօրմների և Պեկեր փաշայի առաքելութեան նկատմամբ։ *)

Նախ և առաջ ես մատնացոյց կը լինեմ պատրիարքարանի պաշտօնական օրգանը հարմարված «Մասիս» լրագրի մի յօդուածի վրա։ «Մասիս» նկատում է, որ կապոյտ գրքի ընթերցանութիւնը շատ օգտաւէտ կը լինի հայերի համար, որովհետև անգլիական պօլիտիկան մերկ յերեսն է գալիս նրա մէջ։ «Մասիս» ակնարկում է մի նշանաւոր կէտի վրա Քիւրդիստանի գլխաւոր հիւպատոս Տրոտտերի ձեռքով Վանի փոխ-հիւպատոս Կէյթընին գրված նամակի մէջ։ Գլխաւոր հիւպատոսը խորհուրդ է տալիս փոխ-հիւպատոսին, որ նա իր ճամբորդութեան ժամանակ հաւատարմութիւն չընծայէ տաճիկ պաշտօնակալներին, այլ քիւրդ տէրէպէյներին ապաւինէ և նրանց հետ բարեկամութեան կապեր յօդէ։ Ուրեմն, ասում է հայ լրագիրը, աւասիկ մեծ Բրիտանիայի ներկայացուցիչը, որ փոխանակ իր պաշտօնին համաձայն քրիստոնեաներին պաշտպան հանդիսանալու քիւրդերի դէմ, ինքն քիւրդերի պաշտպանութեան տակ պիտի մտնի և նրանց ընկերը դառնայ։»

Հայ լրագիրները պնդում են առհասարակ, որ Անգլիայի ձեռքով կատարվելու մեծ բէֆօրմների վերաբերեալ պերճախօս յայտարարութիւններից իսկապէս ոչինչ չեն մնում, բայց թէ հիւպատոսների տեղեկագիրները, որոնք դարձեալ ոչ այլ ինչ են, եթէ ոչ պաշտօնական վերահաստատութիւն արդէն վաղուց և հազար անգամ հրատարակված հալածանքների։

Ինչ որ հայերը բնաւ չը պիտի կարենան ներել Անգլիային այն է, որ նա իր պաշտօնական թղթերի մէջ առանձին շռայլանքով (ostentantion) Քիւրդիստան է անուանում Հայաստանի հայաբնակ գաւառները, մինչդեռ հեզիկ հայ երկրագործներին չարչարողները յատկապէս քիւրդերն են։ Սրանցից յետոյ հայ ազգի թշուառութիւնների պատճառներից մինն է և տաճիկ պաշտօնակալների դասը, որ առաւել հետամուտ է իր անձնական շահերին, քան թէ ընդունած պատուէրների իրագործութեանը։ Բեկեր և Սուլէյման փաշաները մեծ ծառայութիւն մատուցած կը լինէին թէ Սուլթանին և թէ ամբողջ երկրին, եթէ նրանք իմացնէին Աբդիւլ-Համիդին այս անհաւատարիմ ծառաների անունները, որոնց նենգութիւնները դեռ գաղտնի են պահվում մեծաւորների հովանաւորութեամբ։

Զէյթունի գործի վրա հաւաքած նոր տեղեկութիւններս ճշդում են ինչ որ արդէն գրած էի։ Ամեն բան կարդի է ընկել։ Անմատչելի լեռներին ապաւինած զէյթունցիները ներված են։ Նրանք 500 էին թւով և նրանց պարագլուխն էր Պապիկ անունով մի կաթոլիկ հայ։ Սա մի կրթված և քաջ երիտասարդ է, մի ինքնուրոյն անձն և արժանաւոր ներկայացուցիչ նոյն զէյթունցիների, որոնք տակաւին պահպանել են միջին դարերի ասպետական աւանդութիւնները և որոնց համար քաջութիւնն է մարդուս գլխաւոր արժանաւորութիւնը։ Նրանց սովորական մի խօսքը լաւ ցոյց է տալիս, թէ ինչ նշանակութիւն ունի նրանց աչքում այդ առաքինութիւնը։ «Քաջիս նէ՝ աս կանիս», ասում է զէյթունցին այն ամեն հանգամանքների մէջ, որոնք արիութեան մի ապացոյց են պահանջում։—Պապիկը իր զինակիցների հետ այժմ մտել է Զէյթուն։

Մօտիկից ուսումնասիրելով այս ազգութիւնները՝ մարդ ամեն քայլափոխին հանդիպում է հետաքրքրութեան առատ նիւթ տուող նիւթերի, որոնք ապացուցանում են թէ այդ ազգերը արժանի են առաւել մեծ համակրութեան քան որ շնորհվում է նրանց։

Այսպէս գտնում եմ, որ հայերը յոյների նման կրթութեան մէջ դիտելով իրանց ազգի վերակենդանութեան միջոցը, հիմնած են այս տարուայ յունվար ամսին մի ընկերութիւն, որի անունն է «Կիլիկեան»։ Ընկերութիւնը գտանվում է Նորին սրբազնութեան Ներսէս պատրիարքի հովանաւորութեան ներքև և նրա նախագահն է պ. Մինաս Զերազ, պատրիարքարանի ատենադպիրը։ Ընկերութիւնը հիմնած է մի վարժարան Զէյթունի մէջ և երեքը Հաջինում։ Մէկ ամիս առաջ նա բացեց իր հինգերորդ վարժարանը Մարաշի մէջ Սուլթանի պատգամաւոր Սէյիդ փաշայի և Սիսի կաթողիկոսի ներկայութեամբ։ Վեցերորդը բացվելու է շուտով Սիսում, որ Կիլիկիայի կաթողիկոսութեան նիստն է։

Ազգային կրթութեան նուիրված այս շարժողութեան պարագլուխները իսկապէս երիտասարդներն են. նրանցից շատերը ուսած են Ֆրանսիայի մէջ և նրանց գլխաւոր ջանքերից մինն էլ այս է, որ Ֆրանսերէն լեզուն պարտաւորական լինի իրանց վարժարաններում։

«Արարատեան ընկերութեան» մասին ես արդէն ստէպ խօսած եմ, նրա գործունէութիւնը տարածվում է գլխաւորապէս արևելեան Հայաստանի, այն է Վանի Վիլայէթի և Դիարբեկիրի վրա, ուր արդէն շատ վարժարաններ ունի հիմնած։

Կան և ուրիշ շատ ընկերութիւններ, նախ և առաջ «Դպրոցասիրաց Արևելեանը» և «Խիզանինը» (Դիարբէկիրի գաւառում)։ Առաջնի գործունէութեան ասպարէզն է յատկապէս արևմտեան Հայաստանը—Մուշի, Բիթլիսի և Ալաշկերտի շրջանները, ուր արդէն յաջողել է բանալ բաւականին դպրոցներ հասարակային կրթութեան համար, իսկ երկրորդը հիմնել է մի դպրոց քիւրդերից և հայերից բնակված գաւառի մէջ։ Սրտաշարժ հանգամանքներից մին այս է, որ այդ գաւառից Կ. Պոլիս եկած համալներից շատերը ընկերութեան անդամ են և մասնակցում են նրա ծախքերին, որպէս զի զէթ իրանց զաւակները անուս չը մնան։

Միւս ընկերութիւնները ընտրած են այս կամ այն գաւառը, այնպէս որ կրթութեան գործը արագ յառաջ է գնում Հայաստանի մէջ։

Փոխադարձ նախանձաւորութեան հարկ է վերագրել և այն գեղեցիկ երևոյթը, որ Կ. Պոլսի հայ օրիորդներն ևս, հայկազն երիտասարդների օրինակին հետևելով, սկսել են ընկերութիւններ կազմել։

Ես կանուանեմ «Ազգանուէր Հայուհեաց» ընկերութիւնը, որ հիմնված է Աքութարիի և Կադըքեօյի օրիորդներից և որի նպատակն է կրթութիւն տարածել Հայաստանի և Կիլիկիայի պատանի աղջիկների մէջ։ Էջմիածնի կաթողիկոսն Գէորգ դ. նորերս մի քաջալերական կոնդակ առաքեց այս ազնիւ հայ օրիորդներին։

Օրթաքեօյի «Դպրոցասէր Հայուհեաց» ընկերութիւնը, որի կազմողները նոյնպէս հայ օրիորդներն են, մտադիր է վարժուհիներ պատրաստել գաւառների համար։ Հիմնադիրներն այն աստիճանի անձնուէր են, որ դասատուութեան պաշտօնը ինքեանք են կատարում։

Վերջացնում եմ նամակս յիշելով և մի ուրիշ ընկերութիւն որ առանձին ուշադրութեան արժանի է։ Նռայլութեան սէրը այստեղ սաստիկ տարածված լինելով, այս ախտի դէմ մաքառելու համար հայ տիկիններն և օրիորդները կազմել են Կ. Պոլսի Սամաթիա թաղում մի ընկերութիւն, որի «Պարզաէր» անունն արդէն որոշում է նպատակը։ Այս ընկերութեան անդամները պարտաւորվում են հագնել միայն պարզ և էժան հագուստներ։ Ունևոր անդամները այս կերպով խնայված արծաթը նուիրում են դպրոցների զանձարանին։ Մի կիրակի ես ներկայ գտանվեցայ Սամաթիա և տեսայ պատարագից յետոյ մօտ յիսուն հոգի այդ ընկերութեան անդամներից։ Նրանց հագուստը թէև պարզ, բայց վայելուչ էր—élegant։ Շատերը սիրուն են, և քաղցր է տեսնել, որ Ստամբօլի մի անյայտ թաղում կորած հայ օրիորդները այդպիսի պաշտելի անձնուիրութեամբ բարիք են գործում։»

Փ. Վ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ «Прав. Вѣстн.» հաղորդում է որ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչ իր Ամուսնու և Մեծ Իշխան Միխայիլ Միխայիլովիչի հետ հասան Ս. Պետերբուրգ փետրվարի 13-ին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ Բարձրագոյն հրամայված է հաստատել Ս. Պետերբուրգում բարձր կարգադրողական յանձնաժողով, պետական կարգ և հասարակական հանգստութիւն պահպանելու նպատակով։ Գլխաւոր առաջնորդ բարձր կարգադրողական յանձնաժողովի նշանակված է կոմս Լորիս-Մէլիքովի։ Այսօր «Прав. Вѣстн.» լրագրում տպված է կոմս Լորիս-Մէլիքովի յորդորը, որ ուղղված է մայրաքաղաքի բնակիչներին։ Խարկովի ժամանակաւոր գեներալ—նահանգապետ նշանակված է Դոնդուկով—Կորսակով։ Գուրկո արձակված է Ս. Պետերբուրգի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի պաշտօնից, այդ պաշտօնը վերցված լինելու պատճառով, բայց պահպանում է Ս. Պետերբուրգի շրջանի զբաղարդական զօրքերի հրամանատարի պաշտօնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ «Петерб. Вѣдом.» լրագիրը լսել է, որ Վէրա Զասուլիչ երէկ կալանաւորված է մի ծովային օֆիցերի բնակարանում, որի կնոջ հետ նա բարեկամ լինելով, ապաստանվում էր նրա տանը։

ՓԱՐԻԶ, 14 փետրվարի։ «Temps» լրագիրը հաղորդում է որ Գարման խոստովանվեց որ Մոսկվա-Կուրսկեան երկաթուղու եղեռնագործութեան յանցաւորը նա է եղել։ Ֆրանսական կառավարութիւնը վճռեց յանձնել Գարմանին ռուսաց կառավարութեանը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

*) Այդ բանը ես մտադիր եմ անել կանոնաւոր կերպով իւրաքանչիւր շաբաթ կամ երկու շաբաթը մի անգամ։ Ծ. Ֆրանս. թղթակցի։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրավաճառանոցում հետևեալ գրքերը:

Մանկական երգեր Գամառ-Քաթիպայի, կազմած . . — ր. 25 կ.
— նոյնը անկազմ . . . — » 15 կ.
Թաւամաց մեղու՝ պատկերազարդ, կազմած. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի . . . — » 40 կ.
Կարմիր լապտեր՝ պատկերազարդ և կազմած, Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի . . . — » 50 կ.
— նոյնը առանց կազմի . . . — » 30 կ.
Վէպեր. Ց. Գրիգորեանցի . . . — » 60 կ.
Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սունդուկեանի . — » 30 կ.
Մօրես կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառռօ-Թարգմ. Գաղիերէնից. 1 » — կ.
Խորհրդաւոր կղզի, հեղ. Ժ. Վերն 3 հ. Թարգ. Գաղիերէնից . 4 » — կ.
Դիւաբնակ բլուր. հեղ. Էօժէն Սիւ 2 հ. Թարգ. Գաղիերէնից . 2 » 75 կ.
Պատմեկան ներշնչումներ, հեղ. Հրանտ Ասատուրի . — » 60 կ.
Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն Հր. Ասատուր . . — » 35 կ.
Մի կաթիլ արտոսր, զոր կը հեղու. Սիսակ հայ մոխիրեն վրայ . — » 35 կ.
Խօսք զհայրենեաց հեղ. Վ. Վ. Պարտիզակցի . — » 70 կ.
Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ հեղ. Սրուանձտեանց . 1 » 25 կ.
Մանանայ նոր հեղինակի . . . 1 » 75 կ.
Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական դասեր, հեղ. Խրիմեան Հայրիկ 1 » 45 կ.
Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ. . — » 75 կ.
Վանգոյժ. կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վերայ կ'սրսկէ Խրիմեան Հայրիկ . . . — » 20 կ.
Թէ ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն, հեղ. Մ. Չերազի . — » 40 կ.
Հայաստան և Իտալիայ նոյն հեղ. . — » 60 կ.
Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախօսութիւն Ս. Արծրունու. . . . — » 50 կ.

Հրատարակութիւն Զարմայր Մսերեանի

Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս. . 1 » — կ.
Եղբայր և քոյր Գերմանական վէպ. պատկերազարդ . -- » 30 կ.
Արքայադուստր Գերմանական վէպ. պատկերազարդ . — » 35 կ.
Հսկայական ձեռքեր Անգղիական վէպ, պատկերազարդ . — » 10 կ.

Իշխան Բէհբութեանի Հրատարակութիւններ

Վ․յքէ իմ վէչէր, ֆարս երեք պատկերով Մ. Տ. Գ. . . — » 40 կ.
Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ . . — » 25 կ.
Աշնանային երեկոյ գիւղում, վոդևիլ մէկ արարուածով. . — » 25 կ.
Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով . . — » 40 կ.
Ժանօ և Ժանէտ, օպէրա-վոդևիլ, մէկ գործողութեամբ. . — » 40 կ.
Գառաւներին խրատ. վոդևիլ մէկ արարվածով Մ. Տ. Գ. . — » 50 կ.
Տիկինը նրան սպասում է, կ ա տ ա կ ե ր գ ու թ ի ւ ն մ է կ ա ր ա ր ու ա ծ ո վ . . . — » 30 կ.
Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով. . — » 40 կ.
Փակուած դրան մօտ. պատկերամենախօսութիւն . — » 30 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով В Тифлисъ. Въ Центральную книжную торговлю“

8—10

Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գունիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բալագանի մէջ կը ներկայացնվի հասարակութեանը երբէք այստեղ չը տեսնված երևոյթ, այն է ԵՒՐՈՊԱՅԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՀՍԿԱՅ ՕՐԻՈՐԴ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԱՐԼԻԿՆԵՐ ՄԱՐԿԻԶ ՀԵՆՐԻԽ ՎՕԼՖԻ և ՄԱՐԿԻԶՈՒՀԻ ԼՈՒԻԶԸ: Տեղերի գները՝ առաջին տեղեր 50 կոպէկ, երկրորդ 30 կոպէկ: Երեխաները կէսն են վճարում:

5—5

ՍԻՆՈԴԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ուղարկած լինելով Գերապատիւ առաջնորդին Տփխիսու հրամանաւ ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ օրհնութեան և գոհութեան վասն առատ ՆՊԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ժողովրդոց քաղաքիս ի նպաստ շինութեան ՆՆՋԱՐԱՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ սրբոյ Էջմիածնի. Այս կոնդակը պիտի ԿԱՐԴԱՑՈՒԻ առաջիկայ ԿԻՐԱԿԻՍ որ է 17 փետրվարի ՎԱՆԱՑ մայր եկեղեցւոյ մէջ և յետոյ կարգով ՄԻՒՍ եկեղեցիներում 'ի լուր բարեպաշտ ժողովրդոց, որ մասնակից եղան այն նուիրատուութեան:

Անդամ կոնսիստորիայի Գէորգ աւագ քահանայ Թէմուրազեանց

ԲԵՐԼԻՆԻ ակադեմիաի ԻՆԺԵՆԵՐ Կ. Կ. Կելլինգ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է ամեն տեսակ ՊԼԱՆՆԵՐ և զանազան ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ է անձն առնում:

Հասցէն Վարանցովսկայա Նաբերեժնայա, № 4, ՎԵՐԻՆ ՅԱՐԿՈՒՄ:

ՄԻ ՕՐԻՈՐԴ ՎԱՐԺՈՒՀԻ, որ ուսուցչուհու վկայական ունի, ՆՈՐ է եկել ՓԱՐԻԶԻՑ և հիմնաւորապէս իմանում է ՌՈՒՍԵՐԷՆ, ՖՐԱՆՍԻԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ և ԻՏԱԼԵՐԷՆ լեզուները, նոյնպէս ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ և ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ. փնտռում է ԴԱՍԵՐ կամ վարժուհու ՊԱՇՏՕՆ: Հասցէն. Աստամենսկայա փողոց, ԶՈՒԲԱԼՕՎԻ ՏՈՒՆ, առաջին յարկում Սեմինարիայի հանդէպ, Բրօդսկու բնակարանում:

5—6

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՈՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից, իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր. Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոններ[ի] մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մըշակի» խմբագրատանը Ց. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

ՀԱՇՏԱՐԱՐ դատարանի 4 բաժնի դատաստանական ՊՐԻՍՏԱՎ Վ.Ա.ՍԻԼԵՆԿՕ քաղաքային օրէնսդրութեան 1030 յօդուածի համեմատ յայտնում է, որ ՓԵՏՐՎԱՐԻ 16-ին առաւօտեան 10 ժամին, Երևանեան հրապարակի վրա, Թամամշեվի քարվանսարայի մօտ, պօլիցիական վարչութեան հանդէպ ԱՃՈՒՐԴՈՎ ԿԸ ԾԱԽՎԻ ԱՅՐԻ ԷՓԵՄԻԱ ՄԱՅԻՍՈՒՐՕՎԻ շարժական ԿԱՅՔԸ, որ բաղկացած է զանազան կահ կարասիքից, պահարաններից, բուֆէտից և այլն և որ գնահատված է 148 ր.: ԱՅՐԻ ՄԱՅԻՍՈՒՐՕՎԻ կայքը ծախվում է Ստեպան Պօմպալօվի 1880 թ. ՊԱՐՏՔԻ և 1876 թուի սեպտեմբերի 14-ից սկսած պարտքի ՏՕԿՕՍԻ և դատաստանական ծախս 120 ր. ՉԸ ՎՃԱՐԵԼՈՒ համար:

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՑ ԲԱԶԱՐԻ և ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. ռուսաց բազարի վրա 18 համարներ և Հավլաբարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ վերցնել ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կը յայտնվեն:

3—3

С. ПЕТЕРБУРСКІЙ ПОРТНОЙ

ГЕРМАНЪ

ОБРАТИТЕ ВНИМАНІЕ

Имѣю честь извѣстить почтеннѣйшую публику, что нынѣ мой магазинъ и мастерская находятся на Гановской улицѣ на противъ дома Хосроева, въ новомъ устроиствѣ Шахъ-Назарова, только что получено большой выборъ осенней и лѣтней Англійской и Французской матеріи и также принимаются заказы военныхъ и гражданскихъ костюмовъ по умѣреннымъ цѣнамъ.

4—5

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԼՈՒԲԻ ընտրեալների խորհուրդը ԿԱՐԳԱԴՐԵՑ որ մինչև մեծ պասը, հինգշաբթի և կիրակի օրերը կը լինեն ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍՆԵՐ, իսկ շաբաթ օրերը ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ: Հիւրերը կընդունվեն համեմատ առաջին յայտարարութիւնների: Հագուստների ձևը կը լինի. զինուորականները սիւրտուկով ու էպօլէտներով, իսկ միացածները սև հագուստով:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝

1. Երգնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեա[ն] դպրոցներում. գինն է . . — ր. 20 [կ.]
2. Մեծատունեանց—Երգարան աղջ[ի]կանց և աշակերտուհեաց Հայկական ու[ս]ումնարանաց . . . . . 1 ր. — [կ.]
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց—Դիֆտերիտ բողացաւ. . — ր. 25 [կ.]
4. Բժիշկ. Գ. Տէր-Գրիգորեանց—Վա[ր]ակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւ[որ] տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդ[]հատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայ[ն]ատիֆ և ժանտախտ.)

Սոցա յատկութիւններն, ծագման և տա[րածման] բաժման եղանակներն և նախապաշտպան[ո]ղական միջոցներ.

—

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկա[ս]եան գրավաճառանոցում:

5—8

Անանովի քարվանսարան այր[]վելուց յետ, նորից բացված է խա[]տակ մոմի առևտուր Սիօնեան փո[]ղոցում Արծրունու քարվանսարա[]յում № 14. իւրաքանչիւր շաբաթ[] ստացվում է նոր շինուած խտա[]մոմեր իմ սեփական գաւօդից [] որոնք վաճառվում են էժան գնե[]րով. խնդրեմ գնողներին չը թող[]նել իրենց այցելութիւնները:

Յովհաննէս Կուրծեան

4—4

Փետրվարի 12-ից ԿԸ ԲԱՑՎԻ Իշխան ՍՈՒ[]ԲԱՏՕՎԻ տանը ԿՈՆԴԻՏԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пе[]карня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКА[Р]НЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազ[ան] տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վ[ա]ճառվին զանազան տեսակ կոնֆէտներ ա[]ժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամ[բ] ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾ[Ա]ՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հե[]տևեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРША[В]СКОЙ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պ[ա]տուէրները կը կատարվեն ամենայն ճշգրութեամ[բ] գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախ[ս]մեզ վրա առնելով. կոնֆէկտների գինը փոխ[]40 կոպէկից մինչև 1 ր..

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իւր ու[]սումն Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱ[]ԶԻԱՆԵՐԻՑ մինի մէջ, ցանկանում է վարժու[]հու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒ[]ՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում [] ուղարկել հետևեալ հասցէիւ. С. Петер[]бургъ, Новая улица, домъ № 14 кв. [] 10 Хр. Ив. Іоану.

4—5

Дозволено Цензурою 15 Февраля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона